ՎԱՉԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան աշխարհին ներկայանում է իր մտքի արգասիքներն ամփոփող գիտական հրատարակություններով և տպագիր խոսքի մատուցման տեխնիկական ու ժանրային տարատեսակ միջոցներով: Այս ասպարեզում անկրկնելի վաստակ ունի ԳԱԱ «Գիտություն» հրատարակչական-արտադրական պետական փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ լրագրողների միության անդամ Վաչե Խաչիկի Հովակիմյանը, որ բոլորեց իր ծննդյան 70-ամյակը:

Վ. Հովակիմյանը ծնվել է 1951 թ. նոյեմբերի 7-ին Երևանում՝ մտավորականների ընտանիքում: Հայրը՝ Խաչիկ Հովակիմյանը, հեղինակավոր և խորապես հարգված հասարակական և պետական գործիչ էր, որ տարիներ շարունակ գլխավորել է հանրապետության առաջատար «Խորհրդային Հայաստան» թերթը, Հայաստանի լրագրողների միությունը և պետական ու կուսակցական այլ կառույցներ: Միջնակարգ դպրոցում իր ուսումնական նախասիրությունները ձևավորած պատանին ընդունվում և 1973 թ. գերազանցության դիպլոմով ավարտում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Իմացական մղումները շրջանավարտ Վ. Հովակիմյանին

տարան դեպի գիտության կանչող ճանապարհներ: 1973 թ. նա կենսագրական ընթացքը շարունակում է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրայում՝ մասնագիտանալով Հայաստանի նոր դարի պատմության հիմնահարցերում, իսկ 1979 թ. պաշտպանում է ատենախոսություն՝ «Գյուղացիական շարժումներն Արևելյան Հայաստանում XIX դ. վերջին քառորդին» թեմայով: 1976 թվականից երիտասարդ գիտնականն աշխատում է ԳԱ պատմության ինստիտուտում՝ լինելով նախ գիտաշխատող, իսկ 1981 թվականից՝ ինստիտուտի գիտական քարտուղար: 1981-1987 թթ. Վ. Հովակիմյանը կատարում էր այդ ինստիտուտին առընթեր գիտական աստիճաններ շնորհող մասնագիտացված խորհրդի գիտական քարտուղարի պարտականությունները: Եվս մեկ ճանաչում գիտական ասպարեզում՝ 1984 թ. ԽՍՀՄ ԲՈՀ-ը նրան շնորհում է ավագ գիտական աշխատողի գիտական կոչում՝ «Պատմություն» մասնագիտությամբ:

Պատմաբան Վ. Հովակիմյանն անուրանալի ներդրում ունի XIX դ. վերջերի Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների և գյուղացիության պատմության հիմնահարցերի գիտական ուսումնասիրության անդաստանում: Ընդսմին, առաջին անգամ մեր պատմագիտության մեջ նա է լուսաբանել նշված թեմային անմիջապես առնչվող՝ ժամանակի հայ իրականության մեջ բանվորական շարժումների սկզբնավորման հիմնահարցերը: Վ. Հովակիմյանի մենագրությունը (1984 թ.)՝ «Գյուղացիական շարժումներն Արևելյան Հայաստանում (1880-1890-ական թվականներ)», ամրագրում էր հիմնահարցի ընդլայնման հեղինակային մտահղացումները: Հիմնականում նույն թեմայի գիտական մշակումների արդյունքն են երեք տասնյակից ավելի նրա գիտական աշխատությունները: Այստեղ հավելենք գիտական հետաքրքրությունների ընդլայնման այլ դրսևորումները, երբ նա հանդես եկավ իբրև մի շարք այլ գրքերի և հրապարակումների համահեղինակ:

Վ. Հովակիմյանի կենսագրության համար 1985 թվականը եղավ բեկումնային էջ. զգացնել տվեց նրա մյուս նախասիրությունը, որ սերտորեն առնչվում էր պատմաբանի գիտական որոնումների ու աշխատանքի հետ, այն է՝ չմարող հետաքրքրությունն ու դեռևս չարտահայտած ասելիքը գրատպության ու գրահրատարակչության նկատմամբ: Այդ տարի նա ընդունեց ոչ այնքան անսպասելի առաջարկը՝ աշխատելու Գիտությունների ակադեմիայի հրատարակչության գլխավոր խմբագիր: Այնուհետև՝ 1991-2000 թթ., Վ. Հովակիմյանը որպես տնօրեն ղեկավարում էր նույն հրատարակչությունը արդեն փորձառու և աշխատանքային այն ակնառու շնորհներով, որոնք ոչ միայն ստեղծագործական միջավայրին, այլև հենց իրեն ակնհայտորեն համոզում էին, որ ինքը կոչված է լինելու ակադեմիական գրքի հրատարակու-

թյան առաջատարը մեր հանրապետությունում և միաժամանակ պատվով ներկայացնելու այդ գիրքը երկրի սահմաններից դուրս: Նրա մասնագիտական նվիրումը գնահատելու վկայությունն էր այն, որ 2000 թ. նշանակվեց ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչական-արտադրական պետական փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն, որ նույն եռանդով շարունակում է ղեկավարել ցայսօր:

Habent sua fata libelli՝ գրքերն ունեն իրենց ճակատագիրը, ինչպես ասված է վաղուց, և այն սկսվում է դրանց լույս ընծայվելուց ընդհուպ առաջ հրատարակչական գործի տիրույթներում, երբ միահյուսվում են, կցանկանայի ընդգծել, գրքի և իր՝ հրատարակչի ճակատագրերը: Իսկ 1990-ականներն իսկապես ճակատագրական էին և՛ հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի, և՛ դրա կառույցների, այդ թվում և հրատարակչության համար, հատկապես պետության մեկ ձևից մյուսին անցնելու փուլի հեղհեղուկ և հեղաբեկող պատկերացումների հորձանուտներում: Աշխարհահռչակ աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանին փոխարինած ՀՀ ԳԱԱ նախագահների՝ ականավոր գիտնականներ Ֆադեյ Սարգսյանի և Ռադիկ Մարտիրոսյանի, ինչպես և հանրապետության լուսամիտ հանրային դիրքորոշման շնորհիվ հնարավոր եղավ պահպանել Գիտությունների ակադեմիան՝ հաջողությամբ շրջանցելով ստորջրյա խութերն ու խոչընդոտները: Ակադեմիայի հրատարակչությունը լիուլի կիսեց նշված տասնամյակից ավելի տևած այս դժվարությունները, իսկ ինքը՝ հրատարակչության տնօրենը, եղավ այս իրադարձությունների ժամանակակիցն ու գործուն մասնակիցը: Վ. Հովակիմյանն այդ բարդ ու հակասական պայմաններում չխնայեց իր ուժերն ու կարողությունները անսպասելիորեն հայտնված և իր օրենքներն ու կարգուկանոնը թելադրող գրքի շուկայում Ակադեմիայի հրատարակչությանը կենսունակություն ներարկելու և դրա արդյունքները հանրությանը հասցնելու: Այստեղ հարկ է ավելացնել նրա անձնական նախաձեռնությունները կառույցի պահպանությունն ապահովելու գործում, որ պարտադրված շախմատային գամբիտի հետ կարելի է համեմատել՝ թեթև ֆիգուրների կամ զինվորի զոհաբերության գնով (աշխատատեղերի մասնակի կրճատումներ, ֆինանսական տագնապներ և անբավարար չափեր, գրահրատարակչական կարողությունների սահմանափակումներ և այլն) հնարավոր եղավ տակավ առ տակավ ընդլայնել ԳԱԱ հրատարակչության տեղն ու տարածքը անխուսափելի մրցակցության պայմաններում անդրդվելի և օրավուր անզիջում դարձող գրաշուկայում:

Չի կարելի շրջանցել Վ. Հովակիմյանի՝ որպես հրատարակչի անհատական դերակատարությունն ու գործուն մասնակցությունը «Գիտություն»

հրատարակչության կողմից ազգային դասականների ստեղծագործությունների ակադեմիական լույսընծայման ասպարեզում: Հրատարակչության տնօրենը գիտնականի բծախնդրությամբ է մոտեցել Ռաֆֆու, Հովի. Թումանյանի, Ղ. Ալիշանի, Ավ. Իսահակյանի, Լ. Շանթի և այլ հեղինակների գործերի հրատարակչական ու խմբագրական հղկումներին և հատկապես գրքերի ձևավորման արվեստին: Ճաշակով մատուցված և գիտահրատարակչական արդիական պահանջներին համահունչ ակադեմիական հրատարակությունների խստությունը մեղմացնող դյուրամատչելի նմուշներն առինքնում են ընթերցողին՝ անկախ մասնագիտական զբաղմունքից: Կարելի է ասել, որ երեք տասնամյակից ավելի հարատևած իր հրատարակչական գործունեությամբ Վ. Հովակիմյանը մեծապես նպաստել է ազգային գրահրատարակչական մշակույթի արդիական զարգացմանը: ՀՀ ԳԱԱ նախագահությունն ըստ արժանվույն և բարձր է գնահատել Վ. Հովակիմյանի անբասիր գործունությունը ակադեմիայի համակարգում. շնորհավորական ուղերձում մասնավորապես նշված է. «Ծանրակշիռ է Ձեր վաստակը ակադեմիական գրահրատարակության ոլորտի զարգացման գործում: Երեք տասնամյակ ղեկավարելով ԳԱԱ հրատարակչությունը՝ Դուք գիտական և ընթերցող լայն հանրությանն եք ներկայացրել հազարավոր գրքեր և գիտական հանդեսներ, որոնք լուրջ ներդրում են հայ գիտության մեջ: Դրանցից լավագույններն արժանացել են ՀՀ նախագահի, ՀՀ մշակույթի նախարարության, Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի մրցանակներին ու դիպլոմներին: Գնահատելի է նաև Ձեր ներդրումը հայ դասականների երկերի ակադեմիական հրատարակության ուղղությամբ:

Դուք երկար տարիներ Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի գրահրատարակչական խորհրդի, «Научная книга» հանդեսի միջազգային խմբագրական կոլեգիայի, Դ.Ս. Լիխաչովի անվան ամենամյա մրցանակներ շնորհող փորձագիտական հանձնաժողովի, ինչպես նաև գիտական մի շարք հանդեսների խմբագրական խորհուրդների և Հայաստանի ժուռնալիստների միության անդամ եք:

Ձեր մասնագիտական կարողությունների և գործի հանդեպ անմնացորդ նվիրումի շնորհիվ Դուք մեր հանրապետության գրահրատարակության բնագավառի երախտավորներից եք, որի լավագույն վկայությունը գրահրատարակության զարգացման գործում ներդրած ավանդի համար Ձեզ շնորհված «Մովսես Խորենացի» մեդալն է:

Մենք բարձր ենք գնահատում ակադեմիական համակարգում շուրջ կեսդարյա Ձեր արդյունավետ աշխատանքը: Հղելով մեր հոբելյանական շնորհավորանքները՝ սրտանց ցանկանում ենք Ձեզ երիտասարդական ավ-

յուն և հետագա բեղմնավոր աշխատանք, քաջառողջություն և բարեկեցություն»:

Մեզ մնում է միայն յուրովսանն միանալ այս մաղթանքներին և շնորհավորել մեր անդադրում գործընկերոջը՝ ակադեմիական տպագրապետ Վաչե Հովակիմյանին իր հոբելյանի առթիվ. լիահույս, որ նրա ապրած տարիները նոր խթան կդառնան առջևում սպասվող իր աշխատանքային ու ստեղծագործական բերկրանքների համար:

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
«Բանբեր հայագիտության» հանդեսի գլխավոր խմբագիր

Հ.Գ.

Ճակատագրի նախախնամությամբ մեզ բախտ է վիճակվել ճանաչել և աշխատել Վաչե Հովակիմյանի հետ, մի անհատի, որի մարդկային և պրոֆեսիոնալ հատկանիշները անգնահատելի են:

Զտարյուն մտավորական և ճշմարիտ քաղաքացի Վաչե Հովակիմյանի գիտական առաջին հոդվածները տպագրվել են «Լրաբերի» էջերում: «Լրաբերը» դարձավ այն արահետը, որը երիտասարդ գիտնականի առջև ճանապարհ բացեց դեպի գիտության անծայրածիր ու բերկրալի աշխարհը:

Վաչե Հովակիմյանի կյանքի ուղին կանխորոշված է եղել գենետիկորեն, և նա հավատարիմ մնաց դրան ամբողջ կյանքում՝ ծառայելով մարդկային մտքի առկայծումները սերունդներին փոխանցելու շնորհակալ գործին:

Կյանքի ու ժամանակի ելևէջումները չսասանեցին նրա սկզբունքայնությունն ու մարդկայնությունը:

«Լրաբերի» աշխատակազմը շնորհավորում է հանդեսի խմբագրական խորհրդի պատվավոր անդամ Վաչե Խաչիկի Հովակիմյանին՝ մաղթելով արևշատություն և մտահղացումների իրականացում:

«Լրաբերի» աշխատակազմ